«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՔԻ ԱԼ. ՓԱՓԱԽՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2024-2029ԹԹ.

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ`

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՐԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՔԻ ԱԼ. ՓԱՓԱԽՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2024-2029ԹԹ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՐԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



# Բովանդակություն

Ներածություն ……………………………………………………………………....……….…………4

Ուսումնական հաստատության ընդհանուր նկարագիրը …………………….....…………..…………5

Հաստատության առաքելությունը………………………………………….....……..……………..6

1. Հաստատության գործունեությունը……………………………………………....………..……7

Ա. Դպրոցի շենքային պայմանները………………………………………..…....……………….9

Բ. Դպրոցի նյութատեխնիկական բազան և ռեսուրսները………………………..….……………..11

Գ. Կառավարման խորհրդակցական մարմինները……………………………….....……….......11

Դ. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ…………………………………………………………..……….18

Ե. Ուսումնական միջավայր…………………………………………………………..……………….19

Զ. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ……………………………………………………………………………...………24

Է. Դպրոցի տրամադրած կրթության որակը……………………………………….…………24

Ը. Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունը…..……25

Թ. Դպրոցում առկա խնդիրները…………………………………………………………..……….25

Ժ. Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը…………………………….………..26

2. Հաստատության իրավիճակի վերլուծությունն, ուժեղ և թույլ կողմերը……………..………26
3. Նպատակների և խնդիրների սահմանում /ԶԿ1/………………………………………….30
4. Նպատակներն ու խնդիրների սահմանում /ԶԿ2/……………..…...………...............................34
5. Նպատակներն ու խնդիրների սահմանում /ԶԿ3/…………….…...……….............................35
6. Նպատակի ձևակերպման բովանդակային բաղադրիչները………………………………..55
7. Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշները և պահանջները ……………………………………………………… ……56
8. Ծրագրի արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողությունը…………………59

Եզրափակում……………………………………………………………………………………61

## Ներածություն

**Կրթությունը**՝ սովորելն ավելի դյուրին դարձնելու գործընթացն է, կամ գիտելիքի, դիրքորոշման, հմտությունների, արժեքների, ինչպես նաև ավանդույթների և սովորությունների ձեռքբերումը: Կրթությունը հիմնականում տեղի է ունենում ուսուցիչների ուղղորդմամբ, սակայն սովորողների մոտ պետք է զարգացնել ինքնակրթվելու, ինքնակատարելագործվելու կարողունակությունը: Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու և սերունդներին փոխանցելու համար: Կրթությունն, որը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի, որպես ապագա քաղաքացու ձևավորմանն, պահանջում է մշտական հետևողական աշխատանք: Իրականացվող և իրականացվելիք բազմաբնույթ աշխատանքների թվում այսօր խիստ կարևորվում է հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը:

ՀՀ-ում իրականացվում են կրթության ոլորտի բարեփոխումներ, որը աշխատատար գործընթաց է և որին հասնելու համար ուսումնական հաստատության մանկավարժական հանրույթից պահանջվելու է լուրջ և նպատակաուղղված աշխատանք, իսկ նոր ներդրված հանրակրթության պետական չափորոշիչը /ՀՊՉ/ հնարավորություն է ստեղծում լուծելու առկա խնդիրները, և պայմաններ ստեղծելու հետագա զարգացման համար:

- Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակույթի արժեքների յուրացումը
- Ազգային մտածելակերպ ունեցող անհատի ձևավորումը
- Սովորողի մտավոր ներուժի զարգացումը
- Յուրաքանչյուր երեխայի, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին ըստ կարիքների ուշադրության ապահովումը

- Կրթական գործընթացը հիմնական դպրոցում ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհարաժեշտ է ունենալ հմուտ և աշակերտակենտրոն աշխատելաոճով մանկավարժներ, ովքեր կաշխատեն այն գիտակցմամբ, որ ուսուցիչն անընդհատ պիտի զբաղվի ինքնակրթությամբ, բարձրացնելու իր մասնագիտական կարողությունները և ստեղծագործական ունակությունները: Դպրոցի զարգացման ծրագիրը մշակել և կազմել եմ՝ հիմք ընդունելով կրթական, դաստիարակչական, կադրային և այլ անհրաժեշտ ռեսուրսների ցուցանիշներ, հաշվի եմ առել

մանակավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների առաջարկությունները՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023թ-ի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 16-րդ կետի: Առաջնորդվել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024թ.-ի փետրվարի 8-ի N 09-Ն հրամանի պահանջներին և ձևաչափին համապատասխան: Դպրոցի զարգացման ծրագիրը հանդես է գալու որպես դպրոցի ռազմավարության պլանավորում և առնվազն հինգ տարվա տեսլական:

## 1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### Հաստատության մասին ընդհանուր տեղեկություններ.

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այրքի Ալ. Փափախչյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, միջնակարգ հանրակրթական ընդհանուր, այդ թվում՝ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Հաստատության լրիվ անվանում՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՔԻ ԱԼ.ՓԱՓԱԽՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Այրք փ. 4 շ. 5

Հարկայնությունը 3

Շենքը՝ տիպային

Մասնաշենքերի քանակ՝ 2

1-ին մասնաշենքը՝ 3 հարկ, 2-րդ մասնաշենքը՝ ֆիզկուլտուրայի դահլիճ հանդիսությունների սրահ;

Դպրոցն ունի կից կառույց կիսաքանդված՝ կաթսայատուն

Կառուցման տարեթիվ 1969թ.

Դպրոցի աշխատանքային ժամակարգը 1 հերթ

Լիցենզիա /անժամկետ/ տրված 2010 թվականին
ՀՀ կրթության և գիտության նախարարի № 438 Ա/Ք առ 31.05.2006թ. և № 963 Ա/Ք առ 16.07.2013թ.հրամանով
Դպրոցը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի

Տարրական ընդհանուր կրթություն -100 սահմանային տեղով
Հիմնական ընդհանուր կրթություն - 150 սահմանային տեղով
Միջնակարգ ընդհանուր կրթության 80 սահմանային տեղով

Չզորություն (աշակերտ) 536

Փաստացի սովորողների թիվ 23

Աշխատակիցների ընդհանուր թիվ 23

**Գրադարանային ֆոնդ**՝ 200

Կազմակերպաիրավական տեսակը՝ ՊՈԱԿ

**Իրավաբանական անձանց** պետ. Ռեգիստրում, գրանցվել է 04.12.2002թ. վկայական № 03Ա057684

Ենթակայությունը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

**Դպրոցի կանոնադրությունը.**

Հաստատված՝ 04.12.2020թ.

Պաշտոնական կայք՝ ayrq.schoolsite.am/

Էլ.հասցե ayrq@schools.am

Հեռախոս 077-01-12-39

## 1.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը: Թեև դպրոցի գործունեությունը յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Հետևաբար դպրոցի առաքելությունը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է. այն պետք է յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և կրթական ծրագրերի իրականացման որակի ապահովման, հանրակրթության պետական չափորոշչին և հանրակրթական պետական ծրագրին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրության, յուրաքանչյուր սովորողի կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունը և ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայրի ապահովման, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական ու սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկությունները, հակումներն ու ընդունակությունները, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար, իսկ այդ կրթական կարիքները բավարարելու համար Այրքի միջնակարգ դպրոցը ունի բավարար ու անհրաժեշտ

նյութական ու մարդկային ռեսուրսներ: Դպրոցի առաջընթացի իրականացման և այն առավել իրատեսական դարձնելու ճանապարհին կարևոր է ուսումնադաստիարակչական գործընթացում հասնել նրան, որ սովորողները կարողանան իրենք հարցեր առաջադրել և գտնել լուծումներ, ներկայացնել իրենց դիրքորոշումը, գնահատել իրենց աշխատանքն, ինքնակատարելագործվել, ունենալ քննադատաբար մտածելու կարողունակություն, լինել համագործակցող, նախաձեռնող, մեդիագրագետ, տիրապետել օտար լեզուների, ճանաչել և արժևորել իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, հասկանալ դրանց ազդեցությունը համաշխարհային մշակույթի մեջ և այլն:

## 2.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա: Բավարարում է սովորողի կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման այնպիսի ուղիներ, որոնց արդյունքում յուրաքանչյուր սովորող հիմնարար գիտելիքներ ստանալով որոշակի ոլորտում կարողանա ինքնահաստատվել և դառնալ հաջողակ:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցի կրթական կարիքների գնահատումը ներառում է ստորև ներկայացվող հիմնական ուղղությունները, որոնք նպաստում են կրթության արդյունավետ մատուցմանը և սովորողների համակողմանի զարգացմանը.

- Ուսումնական ծրագրերի որակական գնահատում. Լավ մշակված և համապարփակ ուսումնական ծրագրերը, որոնք համապատասխանում են կրթական չափորոշիչներին և բավարարում են սովորողների ուսուցման բազմազան կարիքները:
- Ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում. Արհեստավարժ ուսուցիչների ներգրավվածությամբ՝ արդյունավետ ուսուցման ռազմավարությունների կիրառում, ովքեր տրամադրում են սովորողներին տարբերակված աջակցություն անհատական ուսումնական նպատակներին հասնելու համար:
- Ռեսուրսների գնահատում այդ թվում նաև մարդկային. Արդիական, նպատակային ռեսուրսների օգտագործման գնահատում՝ մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման գործընթացում:

- Ենթակառուցվածքների գնահատում. Համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքների, ներառյալ դասարաններ, գրադարաններ, համակարգչային լաբորատորիաներ և այլ հարմարությունների առկայություն և կիրառականություն՝ նպաստավոր ուսումնական ֆիզիկական միջավայր ստեղծելու համար:
- Տեխնոլոգիաների ինտեգրման գնահատում. համապատասխան ռազմավարությունների կիրառում տեխնոլոգիական գործիքների և ռեսուրսների հասանելիություն, որոնք նպաստում են թվային գրագիտության, մեդիագրագիտության զարգացմանը, ընդլայնում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման փորձառությունը և խթանում արդիական պահանջարկային կրթության կազմակերպմանը
- Հանրակրթական պետական ծրագրերի իրականացման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում և հետադարձ կապ. Գործընթացի կազմակերպման շարունակական գնահատման արդյունավետհամակարգերի ներդրում՝ սովորողների ուսուցման, ուսումնառության առաջադիմությունը գնահատելու, հետադարձ կապ ապահովելու, ուսումնական պրակտիկաների և ուսումնական ծրագրերի բարելավման համար:
- Համայնքի ներգրավվածության գնահատում. համագործակցություն սովորողների ծնողների, համայնքային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ աջակցելու և հարստացնելու սովորողների կրթության կազմակերպման գործընթացը:
- Գործընթացի կազմակերպման ներառականության և բազմատեսանկյուն մոտեցումների կիրառման գնահատում. գործընթացները կազմակերպելով,խթանելով բազմատեսանկյուն մոտեցումների կիրառումը և համընդհանուր ներառականությունը, հաստատությունը արժևորում, հարգում և գնահատում է բոլորի անհատական իրավունքները, ծագումը, մշակույթը, կարողունակությունները ու անձի այլ առանձնահատկությունները:
- Շարունակական մասնագիտական զարգացման գնահատում. հաստատության աշխատողների համար հնարավորություններ ներգրավվելու շարունակական մասնագիտական զարգացման մեջ՝ բարձրացնելու իրենց կարողունակությունները, արդիականացնելու լավագույն, առաջավոր փորձը և խթանելու շարունակական կատարելագործման մշակույթը: Յուրաքանչյուր դպրոց ստանձնելով անհատի ձևավորման և զարգացման ամենապատասխանատու աշխատանքը, տվյալ համայնքում շահառուների՝ սովորողների նրանց ծնողների կրթադաստիարակչական կարիքների բավարարման գործընթացում հանրակրթական ծրագրերի իրականացմամբ լուծում է հետևյալ խնդիրները՝
- Սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

- Համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացու ձևավորում:
- Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագրի իրականացում:

Խորհուրդը ակտիվորեն մասնակցություն կունենա ֆինանսական պլանավորման մեջ, կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը: Շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելիս առաջնությունը կտրվի օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակակով կրթության գործի կազմակերպմանը: Դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հետ զուգընթաց կարևորում եմ մանկավարժների մասնագիտական կատարելագործումն, առաջավոր փորձի ներդրումը գործնականում, կազմակերպել սեմինարներ՝ ակտիվ համագործակցելով ԿԶՆԱԿ–ի, մենթոր դպրոցների հետ, աջակցել և խրախուսել ուսուցիչներին՝ մասնակցեն տարակարգին և կամավոր ատեստավորման գործընթացին, ինչպես նաև հերթական ատեստավորման մասնակցության ապահովում համաձայն՝ 12.04.2024 N 516-Ն կարգի դրույթներին համապատասխան:

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման դերը՝ ներգրավելով նրան վերահսկողական գործընթացում:

Պետք է ամրապնդել հոգաբարձուների խորհրդի և կառավարման խորհրդի սերտ համագործակցությունը: Տարվա կտրվածքով կներկայացնեմ եռամյա հաշվետվություններ, կկազմակերպեմ ի հայտ եկած առաջարկությունների քննարկումը և կձեռնարկեմ միջոցներ

:

`

## Ա. Դպրոցի շենքային պայմանները / ընդհանուր տեղեկություններ/

| Անվանումը | քանակը | Ստացման /շահագործման ամսաթիվ/ | Այլ |
|---|---|---|---|
| **1.Ուսումնական մասնաշենքերի** | 2 | 1969թ. | |

| | | | |
|---|---|---|---|
| ընդհանուր թիվը | | | |
| 2. Առանձնասենյակներ | 2 | 1969թ. | |
| 1. Դասասենյակներ | 12 | 1969թ. | |
| 4. Լաբորատորիաներ | – | 1969թ. | |
| 5. Արմաթ լաբ. | – | | |
| 9.Գրադարան | 1 | 1969թ. | |
| 7. Ընթերցասրահ | - | - | |
| 8. Հոգեբանի կաբինետ | - | - | |
| 9. Բուժկետ | - | - | |
| 10. ՆԶՊ կաբինետ /զինանոց/ | 1/1 | 1992թ. | |
| 11. Համակարգչային կաբինետ | 1 | 2012թ. | |
| 12. Սանհանգույցներ /աղջիկների, տղաների/ | 1/1 | 2023թ. | |
| 13. Մարզադահլիճ | 1 | 1969թ. | Չի շահագործվում |
| 14. Բացօթյա խաղահրապարակ | 1 | 2020թ. | |
| 15. Ճաշարան /բուֆետ/ | 1 | 2023թ. | |
| 16. Հանդերձարան | - | - | |
| 17. Հանդիսությունների սրահ | 1 | 1969թ. | Չի շահագործվում |
| 18. Ուսումնական հաստատության կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն | | | |
| 19.Կաթսայատուն | - | - | |
| 20. Տեսաձայնագրման համակարգ /տեսախցիկներ/ | 1 | 2018թ. | |
| 21. Տեսասրահ | - | - | |
| 22. Արհեստանոց | 1 | 1992թ. | |

**Շենքային պայմանները**

Բավարար

**Ջեռուցման համակարգ**

Էլեկտրոէներգիա

**Գազամատակարարումը՝**

Առկա չէ

Տաք և սառը ջրի առկայություն

**Առկա է**

Կոյուղացում

**Առկա է**

Ինտերնետ կապ

Առկա է

Հեռախոսային կապ

Առկա չէ

## Բ. ԴՊՐՈՑԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

- Դպրոցն ունի համակարգչային կաբինետ 1
- Դպրոցն ունի շախմատի դասարան 1
- Դպրոցն ունի կահավորված ճաշարան1

### Դպրոցի նյութատեխնիկական բազան հարստացնելու և արդյունավետ օգտագործելու ուղղությամբ կատարվող աշխատանքներ

Դպրոցում առկա հիմնախնդիրները լուծելու, նյութատեխնիկական բազան հարստացնելու, դպրոցի շենքային պայմանների բարելավման, ընթացիկ աշխատանքներն իրատեսական դարձնելու համար, զարգացման ծրագրի կատարման գործընթացում ներգրավել համակարգողին համապատասխան լիազորություններն արդյունավետ կատարելու ուղղությամբ: Դպրոցի նյութատեխնիկական բազայի հետագա բարելավման, նոր գույքի ձեռքբերման, ինչպես նաև տարաբնույթ կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով անհրաժեշտ է մշտապես համագործակցել.

- ՀՀ Կրթության պետական կառավարման լիազոր մարմնի
- ՀՀ տարածքային կառավարման լիազոր մարմին
- Տեղական ինքնակառավարման մարմին
- ՀՀ Առողջապահության նախարարության
- Միջազգային կազմակերպությունների
- Բարեգործական հիմնադրամների
- ՀՀ իրավապահների

- ՀՀ զանգվածային լրատվամիջոցների

## Գ. Կառավարման և խորհրդակցական մարմիններ.

«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրության համաձայն, դպրոցի կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա լիազորված պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը:
Դպրոցի ***հիմնադիրը*** ՀՀ –ն է՝ ի դեմս ՀՀ կառավարության:
Հիմնադիրն ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնականապես լուծելու իրավունք՝ բացառություն օրենքով նախատեսված դեպքերի: Դպրոցի լիազոր մարմինը Գեղարքունիքի մարզպետարանն է, որն իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը: Դպրոցը պետք է արդյունավետորեն համագործակցի լիազոր մարմնի հետ, կատարելով իր առջև դրված խնդիրները:

ՀՀ կրթության մասին օրենքի, ՀՀ ԿԳՄՍ նախարարի ընդունած նորմատիվ ակտերի կատարման, կրթական ծրագրերի իրականացման վերահսկումը՝ հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան իրականացնում է լիազոր մարմինը:




**2024 թվականի սեպտեմբերի19-ին ս**ահմանված կարգով ձևավորվել է միացյալ խորհուրդ:

## Դպրոցի տնօրենը

- Խորհրդին է ներկայացնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացումն ապահովող տարեկան գործողությունների ժամանակացույցը

- ➢ Դպրոցի ուսումնական պլանի հիման վրա կրթության կառավարման տեղեկատվական համակարգում իրականացնում է դասաբաշխում, որի հիման վրա ձևավորվում է տարիֆիկացիան և ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը:
- ➢ Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում կառավարության որոշմամբ հաստատված մանկավարժական աշխատողների անվանացանկի հիման վրա ձևավորում և հաստատում է ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատողների անվանացանկը:
- ➢ Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անրիրաժեշտ կարիքները տրամադրում է համակարգողին՝ պահանջվող ծախսերը գնահատելու, նախահաշիվ կազմելու և լիազոր մարմին ներկայացնելու համար:
- ➢ Մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է դպրոցի.
  - Ուսումնական պլանը
  - Ուսումնադաստիարակչական տարեկան աշխատանքային պլանը
  - Տնօրենի տեղակալի, դասղեկների, առարկայական մեթոդական միավորումների նախագահների ու մանակավարժական աշխատողների հաշվետվությունները
  - Մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները:
  - Ղեկավարում է մանկավարժական խորհրդի և համակարգում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները:
  - Աջակցում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորումներին, ինչպես նաև տարակարգ ստանալու նպատակով հայտ ներկայացնելու համար կատարում է անհրաժեշտ աշխատանքներ:
  - Ապահովում է արտադասարանական խմբակներ և ուսումնական լաբորատորիաների, բնականոն գործունեությունը:
  - Ապահովում է դպրոցում իր գործառույթներից բխող՝ գործածության ենթակա փաստաթղթերի վարումը և պահպանումը:
  - Կառավարում է հաստատության սովորողների համակազմը՝ լիցենզիայով սահմանված չափով:
- Դպրոցների կառավարման և տեղեկատվական համակարգում կազմակերպում է էջի վարումը;

## Դպրոցի համակարգողը

- ➢ Գնահատում է տնօրենի տրամադրած՝ ուսումնական գործընթացի արդյաունավետ կազմակերպման նպատակով անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերը, կազմում է նախահաշիվ և ներկայացնում լիազոր մարմնին

- Ապահովում է դպրոցում գործածության ենթակա վարչատնտեսական փաստաթղթերի շրջանառությունը, վարումը և պահպանումը
- Հաստատում է կրթության կառավարման տեղեկատվական համակարգում ձևավորված տարիֆիկացիան
- Ապահովում է գնումների գործընթացի կազմակերպման և իրականացման աշխատանքները
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

## ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Դպրոցի խորհրդակցական մարմինները՝ մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդները և մեթոդմիավորումները գործում են կանոնավոր՝ համաձայն ՀՀ օրենքի, դպրոցի Կանոնադրության, և իրականացնում են իրենց վերապահված գործառույթներն ու պարտականությունները: Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Աշակերտական խորհուրդն ակտիվ է և գործում է ժողովրդավարական սկզբունքներով: Դպրոցի տնօրենությունը խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը:Աշակերտական խորհուրդը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, ներքին կարգապահական կանոնների կենսագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, կազմակերպում է միջոցառումներ, հանդիպումներ, ճանաչողական այցեր: Նախաձեռնությունների մասին տեղեկատվությունն ու կատարած աշխատանքըլուսաբանում են աշակերտական խորհրդի ֆեյսբուքյան էջում:Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալ խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:




**Մանկավարժական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում քննարկում է**

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը.
- Ուսուցման բովանդակության
- Սովորողների ուսումնառության որակի
- Սովորողների հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման,
- Ուսումնական խմբակների, երկարօրյա խմբերի.
- Ուսումնական կաբինետների ձևավորման
- Մասնագիտական կողմնորոշման կենտրոնների հարցերը

**Մանկավարժական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում ընդունում է որոշումներ**

- Դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը
- Դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական ծառայությունների մատուցման հարցերը
- Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու և ամառային առաջադրանքներ տալու, սովորողներին ավարտական քննություններին թույլատրելու,
- Օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսելու Դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնել տնօրենի հաստատմանը
- Հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպում

Մանկավարժական խորհրդի որոշումների կատարումն ապահովում է դպրոցի տնօրենը և արդյունքների մասին պարբերաբար զեկուցում է մանկավարժական խորհրդին: Դպրոցի տնօրենը հանդիսանում է մանկավարժական խորհրդի նախագահ: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում, գումարվում են արտահերթ նիստեր՝ տնօրենի նախաձեռնությամբ, մանկավարժական խորհրդի

1/3 նախաձեռնությամբ: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ՝ սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի (սոց. անապահով սովորողներին աջակցություն ցուցաբերելու հարցը):

Դպրոցում կա 23 աշխատակից, որից՝ 13-ը ուսուցիչ, որոնք տիրապետում են ՏՀՏ գործիքներին:

## Ծնողական Խորհուրդ

Դպրոցի ծնողական խորհուրդը ակտիվ է, կազմակերպում են միջոցառումներ, հավաքներ, ելույթներ, ճանաչողական էքսկուրսիաներ և այլն: Ծնողական խորհուրդը կազմված է 6 անդամից: Ծնողական խորհուրդը սահմանված կարգով իր կազմից ընտրում է խորհրդի 1 անդամ: Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում ծնողական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: Ծնողական խորհուրդը դասարանական ծնողխորհուրդների միջոցով կազմակերպել է ճանաչողական էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և այլ միջոցառումներ: Ծնողների հետ համագործակցությունը շարունակվել է նաև համավարակի պայմաններում: Նրանց հետ կապն իրականացվել է առցանց՝ սոցիալական տարբեր հարթակներում:

## Աշակերտական Խորհուրդ

ՌԻսումնական հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները:

1.Աջակցել աշակերտական խորհրդին՝ բարձրացնելու դպրոցի և իր կանոնադրությամբ իրեն վերապահվածլիազորությունները

2.Աշակերտական խորհրդին տալ լիազորություններ աշակերտի ինքնավարության միջոցով

3.Աշակերտական խորրդի գործունեության հիմքում կարևորելով սովորողների պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը շարունակել ակտիվ հասարակական անհատի կրթման, սեփական կարծիքի ազատ արտահայտման ուղղորդման ուղղությամբ կատարվող աշխատանքները

4.Շարունակել ամնօրյա աշխատանքները, կազմակերպվող միջոցառումները, հանդիպումները, բանավեճերը, մրցույթներն ու կլոր սեղանները, դրանք նպատակաուղղել ուսման նկատմամբ անձնական պատասխանատվության և աշակերտի ազատ մտածողության դաստիարակման գործին

5.Մեծացնել ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունները

6.Ուսումնական հաստատության կայքում ԿԱՊԿ ունեցող սովորողների կամ հաշմանդամության թեմայով սովորողների կողմից պատրաստված նյութերի, հոդվածներ, լուսանկարներ, և այլ հրապարակումներ անել:

**Մեթոդական միավորումներ .** Հաստատությունում գործում են երեք մեթոդական միավորումներ«Հումանիտար», «Բնագիտական>>և « Տարրական», որոնցից յուրաքանչյուրի աշխատանքը կազմակերպվում է տվյալ մեթոդմիավորման նախագահի և անդամների համագործակցությամբ: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը կարելի է նշել որ ամեն մեթոդմիավորում միջին հաշվարկով գումարում է տարեկան 9 նիստեր: Մեթոդմիավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդմիավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով, որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն: Մեթոդական միավորումների աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են մեթոդական միավորումների քարտուղարների կողմից:

Հաստատության մեթոդական միավորումների գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Քննարկել է մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում ընդգրկված ուսումնական առարկաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տվել երաշխավորություններ :
- Քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը:
- Նպաստել է ուսուցիչների (դասվաների) մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը :

- Կազմակերպել է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, մակավարժական-մեթոդական ընթերցումներ :
- Մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն
- Կազմակերպել է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ՝

- 1. Դպրոցում ձևավորված են բոլոր խորհրդակցական մարմինները:
- 2. Խորհրդակցական մարմինները գործում են կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում:
- 3. Ծնողական խորհուրդը ներգրավված է երեխաների արտադպրոցական և արտադասարանական ուսուցման կազմակերպման գործընթացում:
- 4. Մեթոդական միավորումներն կատարում են ծրագրով նախատեսված իրենց գործառույթները:
- 5. Մանկավարժական խորհրդում որոշումներն ընդունվում են մասնակցային միջավայրում:
- ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ՝ 1. Դպրոցում երկարօրյա ուսուցում չի կազմակերպվում, բացակայում է ծնողական նախաձեռնությունները:
- 2. Երեխաների արտադասարանական և արտադպրոցական ուսուցման կազմակերպման գործում ներգրավված են ոչ բոլոր ծնողները:
- 3. Ծնողական խորհրդի կողմից սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ առաջարկություններ չեն եղել:
- 4. Աշակերտական խորհրդի կողմից նախաձեռնությունների թիվը ցածր է:
- 5. Մեթոդական միավորումների կողմից՝ հանրակրթության նոր չափորոշիչների ներդրման գործընթացը կարիք ունի ավելի հետևողական ուսումնասիրության և վերլուծության:

## Դ.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս խոշորացված համայնքի Այրք բնակավայրում, որը հանդիսանում է սահմանամերձ բնակավայր: Դպրոցը պետք է համագործակցի ոչ միայն համայնքի, այլև բազմաթիվ կառույցների հետ:

**ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը**- որպես լիազոր մարմին,ակտիվորեն մասնակցում է նրանց կողմից կազմակերպվող մրցույթներին,խորհրդակցություններին,միջոցառումներին և այլն:

**ԿԳՄՍ նախարարության** - Ուսուցիչներին տեղեկացված պահելու նախարարության կողմից արձակված հրամաններին, կարգադրություններին, ծանոթացնելու այլ հանձնարարականներ պարունակող փաստաթղթերի հետ:

• **ԿԶՆԱԿ**- Համագործակցելով ԿԶՆԱԿ- հետ՝ ինչը կնպաստի կրթության ոլորտի զարգացմանը ի նպաստ աշակերտների որակյալ կրթության ապահովման, առողջության պաշտպանվածության բարելավման, մրցունակ անձի ձևավորման, կրթական մասնագիտական ներուժի կատարելագործման: Ապահովել դպրոցի ուսուցիչների մասնակցությունը ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, ՀՊՉ-ի ներդրման գործում արդյունավետության ապահովման գործում: Դպրոցը ակտիվորեն համագործակցում է նաև ավագ դպրոցների հետ, որոնք հանդիսանում են մենթոր դպրոցներ, ուսուցիչներին մեթոդական աջակցություն տրամադրելու ուղղությամբ:

- Դպրոցը համագործակելու է նաև ԳԹԿ
- Կրթություն շաբատաթերթ
- Գեղամա աշխարի շաբաթաթերթ

Վարդենիս համայնքում գործող մշակութային կենտրոնների հետ՝ երաժշտական, նկարչական, պարի դպրոցներ, քաղաքային գրադարան, և այլն,ինչպես նաև Վօրլդ Վիժն կազմակերպության հետ:

## Ե. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ներդպրոցական վերահսկողության գործիքակազմ, կրթության որակի բարձրացմանը նպատակաուղղված որակյալ կրթական միջավայր ձևավորելու նպատակով, դպրոցը պետք է ունենա ներդպրոցական վերահսկողության գործիքներ: Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների, առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հարաբերությունների ամբողջությունն է: Դպրոցն չունի բավարար նյութատեխնիկական բազա,համակարգիչներ,գրադարան, սակայն արդի կրթական պահանջներին համապատասխան որակյալ կրթություն կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ, հարուստ նյութատեխնիկական բազա:

Բարենպաստ ուսումնական միջավայրը՝ համապատասխան նյութատեխնիկական բազայով և ռեսուրսներով, նպաստում է դպրոցի ուսումնառության ավելի արդյունավետ և որակյալ կրթություն մատուցելուն: Սովորողների կրթական կարիքները ներկայացվում է դպրոցի ուսումնական ծրագրում,արտացոլվում է ուսումնական պլանում և իրականացվում ուսումնառության ընթացքում:

**Անհրաժեշտ եմ համարում նաև ՝**

Բացահայտել յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները, վերհանել յուրաքանչյուր սովորողի ուժեղ և թույլ կողմերը: Դպրոցի զարգացման ծրագրի կարևոր մաս եմ համարում նաև սովորողների արժեհամակարգային այլ կարիքները՝

• Բազմակողմանիորեն զարգացած

• Մասնագիտորեն կողմնորոշված

• Հայրենասեր

• Սեփական դիրքորոշում ունեցող

• ՏՀՏ գործիքներին տիրապետող:

Ուսումնական առողջ միջավայր ձևավորելու համար կարևոր եմ համարում նաև դաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպում,բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,սանիտարահիգիենիկ պահանջների կատարում: Դպրոցում սովորողն պետք է լինի ուշադրության կենտրոնում, լինի պաշտպանված հոգեբանական ճնշումից և բռնությունից:Հատուկ կրթական կարիք ունեցող, ինչպես նաև օժտված երեխաների տարբերակված, խորացված ուսուցման կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում:

***Մասնագիտական կողմնորոշում*** .Մասնագիտական կողմնորոշման հիմնական խնդիրը ոչ միայն սովորողներին մասնագիտության ընտրության հարցում աջակցելն է, այլև սեփական կարողություններն ու հնարավորությունները աշխատաշուկայի ընթացիկ և հեռանկարային կարիքների ու պահանջմունքների համատեքստում գնահատել սովորեցնելը:Ուսումնական տարիների ընթացքում սովորողների շրջանում իրականացվում է թեստավորում, որոնք օգնում են նրանց լուծել ցանկացած երկընտրանքը և պարզել, թե որ ոլորտներն են իրենց առավել հարմար՝ սոցիալական կամ բնական գիտությունները, արդյոք գերիշխող է գեղարվեստական շարանը, կամ գուցե սպորտի տաղանդը, կամ նրանք ավելի շատ հակված են դեպի

բժշկությունը, կամ գուցե հումանիստական կամ տեխնիկական առարկաները, ավելին ինքնորոշման արժեքային և իմաստային կողմերի ձևավորում, մասնագիտական մոտիվացիայի բացահայտում, գործունեության ոլորտների և շարունակական կրթության մասին բարձր իրազեկվածություն, անձնային աճ և կարիերայի պլանավորում, գիտելիքների և կարողությունների զարգացում՝ մասնագիտական հոսքերում առանձին առարկաների առավել խորն ուսումնասիրման միջոցով, ինչպես նաև աշխատանք ծնողների հետ:Այս ամենին օգնում են նաև նպատակային հանդիպումները,գործնական աշխատանքները տարբեր բուհերի, այլ ուսումնական հաստատությունների հետ:Դպրոցում կզարգացվի մասնագիտական կողմնորոշման կենտրոնի գործունեությունը, կձևավորվեն համագործակցություններ հանրապետությունում գործող այն կազմակերպությունների հետ, որոնք կազմակերպում են կրթական ծրագրեր տվյալ համատեքստում: Բացի այդ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատած հրամանի շրջանակներում կիրականացվեն Մասնագիտական կողմնորոշման արտադասարանական խմբակի ծրագրերը, որը ևս կնպաստի սովորողների դիրքորոշման հստակեցման հարցում:

***Ներառական կրթություն.*** Պետական հանրակրթական չափորոշչի պահանջներին համապատասխան ապահովվել է որակյալ, մատչելի և հասանելի կրթություն՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից և ընդունակություններից, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների, այսինքն՝ խոսքի և լեզվի հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի /մտավոր/, հուզական, վարքի, շարժունակության և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձանց, որոնց հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ներառյալ խելամիտ հարմարեցումները: Դպրոցը հնարավորություն ունի այդ սովորողների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց ընտանիքից կտրելու:Նրանց հետ աշխատելու համար ուսուցիչները մասնակցել են ՏՄԱԿ-ի կողմից համապատասխան վերապատրաստումների և ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ՝ ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար: Վերապատրաստված ուսուցիչները օգտագործել են երեխաների առանձնահատկություններին ու կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդներ, միջոցներ, հնարներ, սովորողներին անհրաժեշտ, և մատչելի դասավանդում իրականացնելու համար: Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ բավական ամուր է արմատավորված կանխակալ վերաբերմունքը: Սակայն դպրոցի բարենպաստ մթնոլորտում երեխաները շատ հանգիստ ընդունել են տարբերությունները և սովորում են կողքկողքի:Վերջինս արմատավորել է այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են: Ներառական կրթություն կազմակերպելու գործընթացում մանկավարժական համակազմը արագ արձագանքել է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացրել նրանց մասնակցությունն ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին՝ միաժամանակ նվազեցնելով կրթությունից նրանց դուրս մնալը:

*Նոր տեխնոլոգիաների/ ՏՀՏ –ի ինտեգրում* . Կրթական տեխնոլոգիաների արդիականացումը էլ ավելի է բարելավում դասավանդման ժամանակակից մեթոդների, և ուսուցման ձևերի մշակումը և կիրառումը:: Դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը ժամանակակից դպրոցի պահանջն է:Վարչական և ուսումնական գործընթացը կազմակերպելու գործում մեծ է ՏՀՏ -ի և այլ կրթական տեխնոլոգիաների դերն ու կիրառումը; Դպրոցի աշխատակիցների մեծ մասը դպրոցում կազմակերպված վերապատրաստումների շնորհիվ տիրապետում է **Microsoft Teams** առցանց հարթակի գործիքներին: **Mulberry 2** և **Schools Webmail** պաշտոնական կայքերի միջոցով իրականացվում է դպրոցի փաստաթղթաշրջանառությունն, որը խնայում է ժամանակ և միջոցներ: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը /emis.am/ հնարավորություն է տալիս և՛ վերահսկող մարմիններին, և՛ կրթության տեսչական մարմնին, և՛ տնօրենությանը, և՛ ծնողներին՝ վերահսկելու սովորողների առաջադիմությունը, որակը և հաճախելիությունը. այն հասանելի է դարձնում դպրոցի ամբողջ աշխատանքը: Համակարգը պարունակում է նաև տեղեկատվություն շենքային պայմանների, ենթակառուցվածքների, աշխատակազմի և սովորողների մասին: Տեղեկատվություն է պարունակում նաև հաստիքների, տարիֆիկացիայի, սովորողների ընդունման, տեղափոխման, ազատման գործընթացի մասին:

Դասագրքերի հետ կապված ողջ գործընթացը ևս կատարվում է էլեկտրոնային համակարգի՝Դասագրքերի և ԴԿՏՀ շրջանառու հիմնադրամի միջոցով https://crm.dshh.am /:

ՏՀՏ ամենօրյա կիրառմամբ կապահովվի՝

Ուսումնառության համար իրատեսական միջավայրի ապահովում.

Շփման իրական փորձառություն և հաղորդակցության ապահովում.

Դպրոցի կառավարման արդյունավետ գործիք.

Տեղեկատվության ձեռք բերման վերլուծության ժամանակակից գործիք.

Հետադարձ կապի կշռադատման և գնահատման հնարավորություն:

Կրթական էլեկտրոնային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով՝ կբարձրանա ուսուցիչների մասնագիտական գիտելիքները, ՏՀՏ հմտությունները, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն աշակերտների առաջադիմության բարձրացմանը, նրանց հետաքրքրությանն ու մոտիվացիային;

*Բազմազանությունը ընկալվող և բռնության տարրերը կանխարգելող միջավայր* .Սովորողների և համայնքի կյանքի բարելավման համար կարևորում եմ ժողովրդավարական գործիքների արդյունավետ կիրառումը վերևից-ներքև և ներքևից-վերև շրջանակներում,ուստի բազմակարծության միջավայրում բազմազանությունն ընդունվում, հանդուրժվում և ճանաչվում է,որն էլ իրենից ենթադրում է կազմակերպվող գործընթացներում տարբեր դիրքորոշումներ, մտքեր, համոզմունքներ,քննադատություններ և քանի որ բազմակարծությունն ինքնին բազմազանության ճանաչումն է, այն ապահովվում է միջանձնայի արդյունավետ

հարաբերություններ, երկխոսության խթանում, ներառում, հարգանք և հանդուրժողականություն անձի և նրանց իրավունքների նկատմամբ: Ուսումնական տարիների ընթացքում դպրոցում պահպանվում է բազմակարծության,հանդուրժողականության մթնոլորտը: Այստեղ երաշխավորված են թե՛սովորողների, թե՛ մանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունքները, բացառվում են այլակարծությունը սահմանափակող գործոնները: Դպրոցի գործունեության ընթացքում կարևորվել է ուսուցման և դաստիարակության գործընթացների բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանությունը,առողջ և անվտանգ փոխհարաբերությունները,յուրաքանչյուրի սոցիալականացումը միջավայրում:Դպրոցի ողջ անձնակազմի և Վարդենիս Ոստիկանության անչափահասների բաժնի տեսուչների կողմից աշխատանքներ են տարվում դպրոցում բռնության ու հալածանքի ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային, արտաքին տեսքի) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ: Համատեղ կազմակերպվել են հանդիպումներ, տեսանյութերի դիտում-քննարկումներ:

*Ապահով,անվտանգ և առողջ ապրելակերպ ապահովող միջավայր*. Սովորողների առուսուցմանը զուգահեռ կազմակերպվել են միջոցառումներ սովորողների և աշխատակիցների կողմից բնական աղետները դիմակայելու,ֆորսմաժորային իրավիճակներում համապատասխան վարքագիծ դրսևորելու, առողջ ապրելակերպ դրսևորելու գիտելիքների, հմտությունների ձևավորման և վարքականոնները տիրապետելու համար:Կազմակերպվել են հանդիպումներ և իրականացվել գործնական աշխատանքներ,ուսումնական տարահանումներ ՀՀ ՆԳՆ ԱԻ վարչության աշխատակիցների հետ համատեղ: Սովորողները ուսումնասիրել են նաև Առողջ ապրելակերպ դասընթացը:

*Դաստիարակչական գործընթացի նպատակն է*՝դաստիարակության գործընթացը համակարգված, հաջորդական, տրամաբանական, գիտականորեն հիմնավորված, պլանավորված գործողություն է:Այս գործընթացը ձևավորում է շարունակական ցիկլ, որը ներառում է նաև փոխկապակցված համագործակցողներ՝ ուսուցիչ և սովորող: Նրանք միասին իրականացնում են դաստիարակության գործողություններ, որոնց արդյունքը հանգեցնում է փոխադարձ ցանկալի վարքագծի փոփոխությունների, որոնք նպաստում են սովորողի աճին,ինչու չէ նաև ուսուցչի,ուստի կրթական գործընթացը դաստիարակության նկատմամբ մասնակցային, ընդհանուր մոտեցման շրջափուլ է, որի կարգավորումները իրականացվել են նաև դպրոց ծնող համագործակցության արդյունքում:: Ուսումնառության ընթացքում սովորողների դաստիարակության գործընթացը սերտ փոխկապված է ակադեմիական ուսուցման հետ,քանզի դաստիարակության գործոնը ուղիղ համեմատական է յուրաքանչյուրի ինտելեկտի, գիտելիքների ձեռք բերման, ինքնազարգացման, իրեն և դիմացինին հարգելու,

տարբեր կարծիքները գնահատելու, աշխատելու և ստեղծագործելու, պետականության նորմերը գնահատելու, ազգային և համամարդկային մշակույթը հարգելու ունակությունների, կարողունակություններիձևավորմանըևզարգացմանը;Ուստի՝Ապագա քաղաքացու ինքնաճանաչման, նրա անձի և անհատականության լիարժեք դրսևորման և զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ և միջավայր:
Դպրոցում կարևորվում են հետևյալ մոտեցումները՝

- Սովորողի ձայնը պետք է լինի լսելի
- Սովորողը պետք է մասնակցություն ունենա իր կյանքի կազմակերպմանը և իր չափով այլ հարցերի
- Սովորողը պետք է նախապատրաստվի կյանքի հաջորդ փուլ մտնելու
- Սովորողը մշտապես պետք է ընդգրկվի ակտիվ ուսումնառության մեջ
- Սովորողը չպետք է տուժի հակամարտություններից և ճգնաժամերից
- Սովորողների կյանքը պետ ք է անընդհատ բարելավվի

Պետք է պայքարել սովորողների օտարացման, մեկուսացման դեմ, քանի որ սովորողը միայն համապատասխան կենսական միջավայրի առկայության դեպքում կարող է լիարժեք զարգանալ և ինքնադրսևորվել:
Դաստիարակության ուղղություններն են՝ աշխատանքային, քաղաքացիական, բնապահպանական, ռազմահայրենասիրական, մշակութային, առողջ ապրելակերպի և այլն:

Ուսուցիչների և դասղեկների դասավանդման հտություններր թույլ են տալիս դասաժամերի, միջոցառումների կազմակերպման ընթացքում ուսուցմանը զուգահեռ հնարամիտ մոտեցումների միջոցով ամբողջացնել և իրականացնել ուսումնադաստիարակչական նպատակները:
***Նորարար կառավարում .*** 2024թվականի մայիսի 23-ից դպրոցը անցել է ՀՀ Կառավարության կողմից սահմանած կառավարման նոր մոդելի ներդրման համակարգ: Ունենալով կառավարման փորձ կարևորում եմ նոր կառավարման համատեքստում տնօրենի գործառույթների բեռնաթափման միտումը,որը ենթադրում է վերջինիս կողմից ուսումնադաստիարակչական գործընթացների արդյունավետության մակարդակի բարելավում և ավելի շատ ժամանակի տրամադրում, ապահովելով կառուցողական և բաց համագործակցություն վարչատնտեսական աշխատանքների գծով համակարգողի հետ:

**Զ. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ:**

Դպրոցում աշխատում են 12 ուսուցիչ, որից 4 տղամարդ, 55 և ավելի բարձր տարիք ունեն 5 ուսուցիչ: Տնօրինությունը պետք է լինի հետևողական, մանկավարժական կադրերի մասնագիտական կարողությունների և հմտությունների շարունակական զարգացման և կատարելագործման հարցում: Սակայն հարկ է նշել, որ կադրերի երիտասարդացման հարցը պետք է լինի առաջնային, այդ գործընթացի կարևոր դերակատարներ պետք է լինեն փորձառու և երկարատև մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչները:

## Է.Դպրոցի տրամադրած կրության որակը

Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլ նոր գիտելիքների ստեղծում, անհատապես կամ կոլեկտիվ եղանակով: Կրթության որակի բարձրացմանն միտված հիմնական ուղղություններն են՝

- Հանրակրթության նոր չափորոշիչների արդյունավետ ներդրում և ակնկալվող վերջնարդյունքների ապահովում, ըստ կրթական աստիճանների
- Դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, շենքային պայմանների նորացում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում
- Մատուցված կրթական ծառայության մատչելիություն: Կրթության կենտրոնում պետք է լինի սովորողն, որին հնարավորություն կտրվի պատասխանատվություն կրել իր կրթության համար, ինչն իր հերթին ուժեղացնում է սովորողի վստահությունն իր ուժերի ու մոտիվացիան սովորելու նկատմամբ: Սովորողների ակտիվ մասնակցություն կրթական միջոցառումներին, օլիմպիադաներին, և այլ կրթական ծրագրերի: Կրթական որակի բարձրացման գործում կարևորում եմ սովորողների ներգրավածությունն որոշումների կայացման, վերջնարդյունքների ձևավորման համար:

## Ը.Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունը

Դպրոցի ուսուցիչները պետք է կարողանան օգտվեն կրթական կայքերից

- ԿԶՆԱԿ
- ԿՏԱԿ
- ԴՇՀ

Հայկական կրթական միջավայր, (Պաշարների շտեմարան) Հեռավար (դիստացիոն) կրթության անհրաժեշտության դեպքում, ուսուցչական համակազմը պետք է կարողանա

հմտորեն օգտվի TEAMS, առցանց հարթակի գործիքներից: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը /emis.am/ հնարավորություն է տալիս վերահսկող

մարմիններին, կրթության տեսչական մարմնին, լիազոր մարմնին, տնօրենությանը և ծնողներին վերահսկելու սովորողների առաջադիմությունը և հաճախելիությունը:

## Թ. Դպրոցում առկա խնդիրները

Դպրոցի շենքային պայմանները չեն համապատասխանում արդի պահանջներին՝ լոկալ ջեռուցում, ժամանակակից լաբարատորյաների ստեղծում, դպրոցի վերանորոգում;

Մանկավարժական համակազմի ոչ ակտիվ մասնակցություն կամավոր ատեստավորման և տարակարգի ձեռքբերման գործում: Գնահատման նոր չափորոշիչների սահուն ինտեգրում:

## Ժ.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Դպրոցի գործունեության կարևոր ուղղություններից է նրա բյուջետային հնարավորությունները, քանի որ դպրոցը հիմնական և հաճախ միակ ֆինանսավորումը ստանում է պետական բյուջեից, ապա հաջողությունների և դժվարությունների հիմնական պատճառը այդ միջոցների բավարար կամ անբավարար լինելն է: Դպրոցը մինչև 2023թվականը ֆինանսավորվում էր աշակերտների թվով, իսկ 2023-2024ուսումնական տարվանից արդեն դասարանների թվով, նշեմ նաև, որ դպրոցը ֆինանսավորվում է 100–ից պակաս աշակերտ թվով կարգին համապատասխան:

- Բարեգործական, նպատակային ներդրումները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքցիների նվիրատվությունը:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Զարգացման ծրագրը կանոնակարգված իրականացնելու համար անհրաժեշտ է իրավիճակների հստակ վերլուծություն, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործում, որի համար էլ պետք է առանձնացնել դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
|---|---|
| **Ա . Շենքային պայմաններ** | |
| Մշտական ջրամատակարարում Նյութատեխնիկական բազայի բավարար առկայություն կա հետևյալ կաբինետներում՝ ՆԶՊ դասասենյակ զինանոց, ինֆորմատիկայի կաբինետ, տնօրենի կաբինետ, ուսուցչանոց, սանհանգույցներ. շախմատի դասասենյակ ճաշարան; | Ուսումնանյութական բազայի պակաս ( համակարգչային տեխնիկա, քարտեզներ,պաստառներ, ) Սպորտգույքի պակաս, Տեխնոլոգիայի կաբինետի գույքի պակաս; Չեն գործում բնագիտական առարկաների լաբորատորիաները ;Մեծ սպորտդահլիճը չի շահագործվում;Ոչ բարվոք են միջանցքների պատուհանները և դռները; Հրաձգարանի բացակայություն ; Հանդիսությունների սրահի բացակայություն |
| **Բ.ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան** | |
| **Համակարգիչ-5**<br>**Սկաներ-1 Լազերային տպիչ-1 Տեսաձայնագրիչ -1 Բազմաֆունկցիոնալ տպիչ-1 Պրոյեկտոր-1 Սառնարան-1**<br>**Ջրատաքացուցիչ-1**<br>**Գրատախտակ -11** | 1.Ուսումնանյութական բազայի պակաս ( քարտեզներ,պաստառներ, գրքեր)<br>2.Սպորտգույքի պակաս, Տեխնոլոգիայի կաբինետի գույքի պակաս;<br>2.Հանդերձարանների պաս;<br>3.Մեծ սպորտդահլիճը չի շահագործվում:<br>**4.**Երգի կաբինետի բացակայություն; |
| **Գ.Կառավարման խորհրդակցական մարմինները** | |
| Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ: Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը, Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին: Դպրոցի կառավարման խորհուրդը օրենքով | - Խորհրդակցական մարմինների կողմից իրենց գործառույթների հստակ իրականացման, կանոնակարգման, միմյանց միջև արդյունավետ համագործակցության պակաս:<br>- Խորհրդակցական մարմինների անդամների՝ միմյանց միջև ակտիվ ու արդյունավետ համագործակցություն պակաս:<br>- Կառավարման խորհրդի նիստերին անդամների բացակայություններ:<br><br>-Աշակերտական խորհուրդի իրազեկվածության և նախաձեռնությունների պակաս:<br>-Արտաքին կապերի ստեղծման փորձի |

| | |
|---|---|
| նախատեսված պարբերականությամբ հրավիրում է նիստեր, քննարկում դպրոցի խնդիրները, իր լիազորությունների շրջանակներում կատարում է առաջարկություններ:<br>Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, լսում նրանց, լուծում տալիս խնդիրներին: Անչափ կարևորում ենք, աշակերտների կողմից բարձրացված հարցերի խորը և մասնագիտական վերլուծությունը, աշակերտական խորհրդի նախաձեռնողականության խթանումը:Աշակերտական խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը: - Համագործակցություն ծնողական խորհրդի հետ: Ծնողական խորհրդի կողմից աջակցություն դպրոցին:Ծնողական համայնքի համախմբվածություն արտակարգ և ռազմական դրության պայմաններում: | պակաս:<br>-Երկարօրյա ուսուցման խմբակների բացակայություն /ծնողական նախաձեռնություն չկա/ :<br>-Թույլ մասնակցություն ուսումնական պրոցեսի կազմակերպման մեջ<br>-Կարողունակությունների կիրառման պակաս: |
| **Դ.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ** Դպրոցում շատ է կարևորվում համագործակցությունը պետական և հասարակական տարբեր կառույցների հետ՝ համարելով այն միջավայր, խթան սովորողների սոցիալական դրսևորումների ձևավորման և զարգացման, քաղաքացիական գիտակցություն ձևավորելու համար: Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների անցկացմանը: Համայնքի ներկայացուցիչները հրավիրվում են մասնակցելու դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, մասնավորապես, ազգային տոներ և տոնակատարություններ, հիշատակի օրեր, բարեգործական նախաձեռնություններ իրականացնելիս: Դպրոցի աշակերտներն իրականացնում են տարբեր նախագծային աշխատանքներ՝ միտված համայնքի կարիքների հետազոտմանը: | |
| Դպրոցը մշտապես համագործակցում է համայնքի հետ, ցուցաբերում համայնքային միջոցառումներին, շաբաթօրյակներին, հանդիպումներին, և այլ ծրագրերին: Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համապատասխան ուշադրության | Համայնք-դպրոց կապի պասիվություն, Սովորողների մասնագիտական կողմնորոշման հարցում համայնքի հնարավորությունների օգտագործումը, փոխադարձ ներդրումները բավարար չեն: Իրազեկել համայնքին, ապահովել ակտիվ ներգրավվածությունը, կարևորել դպրոց- |

| | |
|---|---|
| ապահովում | համայնք կապը |
| **Ե.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ** | |
| • Ներդպրոցական վերահսկողությանն ուղղված կանոնավոր աշխատանք՝ նախատեսված ՆԴՎ պլանի<br>• դաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպում, բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում<br>• բուլինգի բացառում,և կանխարգելում, հոգեբանի մշտական և հետևողական աշխատանք Նախագծային աշխատանքների կազմակերպում և ներկայացում | Աշակերտ թվի նվազում<br>Սոցիալապես խնդիրներ ունեցող ծնողական համայնքին բավարար փոխօգնություն չի կազմակերպվում:<br>Չկա համագործակցություն Արմաթ ինժեներական լաբորատորիայի հետ: |
| **Զ.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ** | |
| Ակտիվ համագործակցություն ԿԶՆԱԿ –ի,մենթոր դպրոցների հետ, մասնագիտական հմտությունները կատարելագործելու նպատակով<br>Պարտադիր ատեստավորման մասնակցություն | ՌԻսուցիչների կամավոր ատեստավորման քիչ թիվ<br><br>Երիտասարդ կադրերի դիմելիության պակաս |
| **Է. Դպրոցի տրամադրած կրթության որակը** | |
| **Բավարար** | |
| **Ը.Դպրոցի կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարություններ** | |
